ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/172

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ
Մասնակից՝ «Ինվեստ բիզնես» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Դ.Միսակյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/23» ծածկագրով հրատապ մեկ անձ, ճնշման վերացման փականների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16825-2019 գրությամբ «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի 07.10.2019թ.-ի թիվ 03/4526-2019 գրության հիման վրա, 14.10.2019թ. «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 14.10.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 22.10.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 22.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.10.2019թ.-ին:

2. Ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ն 07.10.2019թ. թիվ 03/4526-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել է «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ճնշման վերացման փականների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/23» ծածկագրով ընթացակարգի ընթացքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն՝ ներկայացնելով «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 15.10.2019թ. գրությամբ դիմել է «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16825-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք:

Մասնակիցը ներկայանալով նիստին հաստատեց, որ Ընկերությունը հրաժարվել է պայմանագիր կնքելուց, քանի որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, գնային առաջարկը 2-րդ չափաբաժնի համար ներկայացվել է մեկ (1) միավոր ապրանքի համար, մինչդեռ հրավերով սահմանված պահանջվող ապրանքի քանակը հինգ (5) միավոր էր:

4. <u>ՍՑ-LO-2019/172 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ճնշման վերացման փականների ձեռքբերման նպատակով 03.06.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/23» ծածկագրով հրատապ մեկ անձից ձեռքբերման գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 2-րդ չափաբաժնների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովի 18.06.2019թ.-ի թիվ 5 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Մասնակցի հայտը գնահատել բավարար և 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ին:

19.06.2019թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Պատվիրատուն 19.06.2019թ.-ին թիվ 831 գրությամբ դիմել է «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ին և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ ներկայացրել է «ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/23» ծածկագրով պայմանագրի նախագիծը և հայտնել, որ պայմանագիր կկնքվի պայմանագրի գնի 10 տոկոսի չափով պայմանագրի կատարման ապահովում և կնքված պայմանագիր ներկայացնելու դեպքում:

Մասնակիցը 20.06.2019թ.-ին գրությամբ դիմել է «Ջրառ» ՓԲԸ-ին և հայտնել է, որ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/23» ծածկագրով ճնշման վերացման փականների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի շրջանակներում «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում՝ 2-րդ չափաբաժնի մասով տեղի է ունեցել տեխնիկական վրիպում: Այն է՝ «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ն գնային առաջարկը 1 860 000 (մեկ միլիոն ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներկայացվել է 1 (մեկ) միավոր ապրանքի համար, մինչդեռ հրավերով սահմանված պահանջվող ապրանքի քանակը եղել է 5 (հինգ) հատ: Ուստի, ելնելով վերը շարադրածից, «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ն հնարավոր չի համարում և հրաժարվում է առաջարկվող պայմանագրի նախագիծը կնքելուց:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16825-2019 գրությամբ «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը

հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից ճնշման վերացման փականների ձեռքբերման նպատակով 03.06.2019թ.-ին հայտարարված «ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/23» ծածկագրով գնման

ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2019թ.-ի թիվ 5 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Մասնակցի հայտը գնահատել բավարար և 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ին:

19.06.2019թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Պատվիրատուն 19.06.2019թ.-ին թիվ 831 գրությամբ դիմել է «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ին և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ ներկայացրել է «ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/23» ծածկագրով պայմանագրի նախագիծը և հայտնել, որ պայմանագիր կկնքվի պայմանագրի գնի 10 տոկոսի չափով պայմանագրի կատարման ապահովում և կնքված պայմանագիր ներկայացնելու դեպքում:

Մասնակիցը 20.06.2019թ.-ին գրությամբ դիմել է «Ջրառ» ՓԲԸ-ին և հայտնել է, որ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/23» ծածկագրով ճնշման վերացման փականների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի շրջանակներում «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում՝ 2-րդ չափաբաժնի մասով տեղի է ունեցել տեխնիկական վրիպում: Այն է՝ «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ն գնային առաջարկը 1 860 000 (մեկ միլիոն ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներկայացվել է 1 (մեկ) միավոր ապրանքի համար, մինչդեռ հրավերով սահմանված պահանջվող ապրանքի քանակը եղել է 5 (հինգ) հատ: Ուստի, ելնելով վերը շարադրածից, «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ն հնարավոր չի համարում և հրաժարվում է առաջարկվող պայմանագրի նախագիծը կնքելուց:

Մասնակիցը պայմանագրի նախագծի ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ն, որպես ընտրված/հաղթող/ մասնակից, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16825-2019 գրությամբ «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/172 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ինվեստ բիզնես» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**